ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

15 նոյեմբերի 2025թ. **N 74-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՆԿԱԽ ԴԻՏՈՐԴ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Դ.ԻՈԱՆՆԻՍՅԱՆԻ 13.11.2025Թ. N 3232 ԴԻՄՈՒՄՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի լիազոր ներկայացուցիչ Դ. Իոաննիսյանի 13.11.2025թ. N 3232 դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի լիազոր ներկայացուցիչ Դ.Իոաննիսյանի 13.11.2025թ. N 3232 դիմումում նշված է.

««Հայաքվե» դիտորդական առաքելության կողմից տարածվել են հրապարակումներ, որոնցով արտահայտվում է կանխակալ դիրքորոշում և նախապատվելի վերաբերմունք իշխանության կամ ընդդիմության, այդ թվում՝ Վաղարշապատի ընտրություններին մասնակցող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վերաբերյալ, ինչպես նաև հստակ աջակցություն է արտահայտվում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մրցակիցների դեմ և «իրական ընդդիմադիրների» օգտին:

«Հայաքվե» նախաձեռնության «Facebook» սոցիալական ցանցի էջում հրապարակված՝ դիտորդական առաքելություն իրականացնող նույնանուն խմբի անդամների հայտարարությունները, որոնք արվել են Վաղարշապատ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քարոզարշավի ընթացքում՝ ստորև.

Դիտորդ Մանվելյան Արմեն Բախշիի 28.10.2025 «Մարդիկ պետք է գնան ընտրատեղամասեր, որ իշխանություն փոխվի»,-վերնագրով հարցազրույցում դիտորդ Մանվելյանը ասում է. «Էդ մարդկանց, ի դեպ, դուրս բերելը շատ է օգնում նաև էսօրվա քաղաքական ռեժիմը իր տեռորով, իր ահաբեկչությամբ և շատերին արդեն դա սկսեց զզվացնել, շատերը արդեն անտարբերության իրավիճակից դուրս են գալի, մտնում են ընդդիմադիր դաշտ...»: https://www.facebook.com/share/r/17ZNFswrCz/

07.11.2025 «Թուրքերի անունից մեզ խաղաղություն առաջարկող հայերը դավաճաններ են»,- վերնագրով հարցազրույցում դիտորդը ասում է. «Էն մարդիկ, ովքեր ադրբեջանցիների անունից գալիս են և խոսում են խաղաղության մասին՝ հայկական

ազգանուններով, նրանք բոլորը դավաճաններ են»: (0:05 դավաճանների մասին խոսքի ժամանակ ցուցադրվել են ՔՊ անդամներ՝ մասնավորապես ԱԳՆ Արարատ Միրզոյան և վարչապետ Նիկոլ Փաշինյան): https://www.facebook.com/share/r/18sH4CAbDd/

Դիտորդ Ակոպյան Ցոլակ Արամի 04.11.2025 «Այս իշխանությունը վաղ թե ուշ ամեն ինչի համար պատասխան է տալու», վերնագրով հարցազրույցում դիտորդը ասում է. «Իշխանության քայլերը ես չէի ասի ուղղված են միայն Հայ առաքելական սուրբ եկեղեցու դեմ, իշխանության քայլերը ուղղված են ողջ հայ ժողովրդի դեմ, ՀՀ դեմ, այ հիմնական նպատակը, իհարկե էս իշխանություններին, նախ իրենք սիրում են շոուներ ապահովել, իրենք փորձում են հասարակությանը հերթական անգամ մոլորեցնել, հասարակությանը հերթական անգամ տանել էն ճանապարհով, որպեսզի կարողանան շոուներով, սենց ինչ որ ֆիլմեր նկարելով հասարակությանը հետաքրքրություն ներկայացնեն իրենց նկատմամբ…»: https://www.facebook.com/share/r/17KXkdAFA7/

05.11.2025 «Այս իշխանությունը բանտում է հայտնվելու, այլ տարբերակ չկա», վերնագրով տեսանյութում դիտորդը ասում է. «Քանի որ այս իշխանությունը սահմաններ չունի, նա անընդհատ կարա գնա, անսահման ա սրանց, բարոյականություն չունեցող մարդկանց համար, ընդհանրապես բարոյականությունը արժեզրկող մարդկանց համար մտածել, որ իրենք ունեն սահման, ինձ թվում ա իմաստ չունի դրա մասին խոսել: Սրանք սահման չունեն, սրանք ամեն ինչի պատրաստ են ու սրա դեմ միակ ճանապարհը համախմբված ժողովուրդը պետք ա ոտքի կանգնի, սահմանադրական ճանապարհով ճանապարհի ամեն մեկին իրենց տեղը, իսկ իրանց մեծ մասի տեղը բանտում ա լինելու…»:https://www.facebook.com/share/r/1aqNF6nMMS/

Դիտորդ Սողոմոնյան Մենուա Անդրանիկի 27.10.2025 «Նիկոլն արհեստական ճգնաժամեր է ստեղծում, որ մեզ պառակտի», վերնագրով տեսանյութում դիտորդը ներկայանում է որպես ընդդիմադիր, առաջին դեմքով խոսում է կես տարուց իշխանության գալու մասին ու ասում է. «Փաշինյանն ինչու՞ է հետևողականորեն ապակայունացնում երկրի վիճակը, որովհետև նա գիտակցում է, որ առաջիկա խորհրդարանական հերթական ընտրություններին ժողովուրդը մերժելու է իրեն ու նա պարտվելու է…»: https://www.facebook.com/share/r/19zmqxWaCw/

Վերոնշյալ անձանց կողմից կատարված քաղաքական ուղղվածության հայտարարությունները հրապարակվել են դիտորդական առաքելություն իրականացնող «Հայաքվե»-ի՝ Facebook սոցիալական կայքի էջում, ինչով վերջինի կողմից խախտվել են ընտրական օրենսդրության պահանջները: Մասնավորապես՝ համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգիրք») 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝ (…) Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, որոնց կառավարման մարմնի կազմում, բացառությամբ ժողովի, որևէ ներկայացուցիչ չի մասնակցում տվյալ

ընտրություններին թեկնածուի կարգավիճակով, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:

Ինչպես պարզ է դառնում վերը բերված փաստերից, «Հայաքվե»-ն չի պահպանում քաղաքական չեզոքության այս կանոնը, ակնհայտորեն աջակցում է ընդդիմադիր կուսակցություններին, հետևաբար, չի կարող շարունակել իրականացնել դիտորդական առաքելություն: Օրենսգրքի 31-րդ հոդվածի 4.1-ին մասի համաձայն՝

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումը, եթե հավատարմագրվելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության պայմաններում հավատարմագրման վերաբերյալ դիմումը կմերժվեր: (...)

Ավելին, «Հայաքվե» դիտորդական առաքելության հավատարմագրած դիտորդներ Ցոլակ Ակոբյանն ու Արմեն Մանվելյանը, իրենց վերոնիշյալ հայտարարություններով իրականացրել են Օրենսգրքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված նախընտրական քարոզչություն՝ դիտորդ լինելու բերումով չունենալով դրա իրավունքը: Դա իր հերթին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտում է:»:

Դիմումատուն խնդրում է.

«1. Ուժը կորցրած ճանաչել Վաղարշապատի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնող «Հայաքվե» դիտորդական առաքելության հավատարմագրումը.

2. Կազմել «Հայաքվե» առաքելության կողմից հավատարմագրված դիտորդներ Ցոլակ Ակոբյանի և Արմեն Մանվելյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 40.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրություն(ներ) և համապատասխան հայցադիմում(ներ) ներկայացնել Վարչական դատարան:»:

2. <u>Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը</u>

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

Վերոհիշյալ նորմերից բխում է, որ ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերը կիրառելի են միայն Ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի իրականացման առանձնահատկություններից է նաև Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը, որի համաձայն՝ «Դիմումատուի վերաբերյալ տվյալներ չներառող կամ կեղծ տվյալներ ներառող դիմումները, իրավունքի չարաշահմամբ ներկայացված դիմումները, ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները, ինչպես նաև սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջների խախտմամբ ներկայացված դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին: Այդ դեպքում ընտրական հանձնաժողովն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ իրականացնելու վարչական վարույթ»:

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:»:

ՀՀ Սահմանադրության նշված հոդվածը հստակ և աներկբա ամրագրում է, որ վարչական մարմիններից պատշաճ վարչարարություն հայցելու իրավունքից անձը կարող է օգտվել միայն ***իրեն առնչվող գործերով***:

Ելնելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի իրացմանը ներկայացվող պահանջներից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի իրավակարգավորումների հիմքում դրվել է նույն տրամաբանությունը:

Բողոքին կամ դիմումին ներկայացվող պահանջներից է դիմումը կամ բողոքը իրավասու անձի կողմից ներկայացված լինելը:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված՝ դիմում, բողոք ներկայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտների ցանկում հասարակական կազմակերպությունը նշված չէ:

Վերոգրյալից ակնհայտ է, որ դիմումատու «Անկախ դիտորդ» հասարակական կազմակերպությունը չի հանդիսանում դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ, ուստի կազմակերպության անունից ներկայացված դիմումը չի համապատասխանում Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի լիազոր ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանի 13.11.2025թ. N 3232 դիմումով վարչական վարույթի հարուցումը մերժել:

2. 13.11.2025թ. N 3232 դիմումով ներկայացված հանգամանքները պարզելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցել վարչական վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**